ՁԵՎ Հ.1

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ---------- դիմումը՝ ---------- հասցեում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման ---------- վկայական) շինության զբաղեցրած հողամասի համար կնքված վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:

---------- հասցեում գտնվող գույքի կադաստրային արժեքը կազմում է -------- ՀՀ դրամ:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, Երևան քաղաքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշման հավելվածով.

1. Լիազորել Երևան քաղաքի ------ վարչական շրջանի ղեկավար -----ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, ----------ի հետ կնքել համաձայնագիր՝ ---------- հասցեում գտնվող շինության զբաղեցրած ------ քմ մակերեսով հողամասի համար -----թ. կնքված վարձակալության հ.---- պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին՝ ներառելով պայմանագրի հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) պայմանագրի 16-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև ---- թվականի դեկտեմբերի 31-ը.»

2) պայմանագրի 4.2 ենթակետից հանել «(այդ թվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու կապիտալ շինարարություն)՝» բառերը.

3) պայմանագրի 4.4 ենթակետից հանել «իսկ ամրակայված անշարժ գույքը կողմերի միջև որոշվող պայմաններով օտարելու վարձատուին» բառերը.

4) պայմանագրի 5.5 ենթակետից հանել «և ամրակայված անշարժ գույքը վարձատուին օտարելու» բառերը.

5) պայմանագրի 6-րդ կետը լրացնել նոր՝ 6.7, 6.8, 6.9 և 6.10 ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ.

«6.7 Վարձակալված հողամասի օգտագործման նպատակի փոփոխման անհրաժեշտության դեպքում վարձատուն իրավունք ունի, նախապես մեկ ամիս առաջ տեղեկացնելով վարձակալին, սահմանված կարգով հրաժարվել պայմանագրից:».

«6.8 Երևան համայնքի կամ Երևանի քաղաքապետարանի կողմից հավանության արժանացած քաղաքաշինական կամ ներդրումային ծրագրերի իրականացմամբ կամ քաղաքաշինական խնդիրների կանոնակարգմամբ, ինչպես նաև Երևան համայնքի կողմից կամ մասնակցությամբ այլ ծրագրերի իրականացման կամ հանրային նշանակության այլ խնդիրների կարգավորմամբ պայմանավորված՝ վարձատուն իրավունք ունի միակողմանի հրաժարվել սույն պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը համարվում է լուծված կամ դադարած՝ պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին ծանուցումը վարձակալի կողմից ստանալու պահից երեք ամիսը լրանալուն հաջորդող օրը, իսկ սույն պայմանագրից ծագող վարձակալության իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարձատուի դիմումի հիման վրա:»

«6.9 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում են, որ պայմանագրի 6.8-րդ ենթակետի համաձայն պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին Վարձատուի գրավոր ծանուցումը իրականացվում է հետևյալ երեք եղանակներով միաժամանակ.

ա. Վարձատուի գրավոր ծանուցումը հրապարակվում է Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում,

բ. Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է Վարձակալի էլեկտրոնային հասցեին (փոստին)՝ առկայության դեպքում,

գ. Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է փոստային առաքմամբ՝ պատվիրված նամակով:

«6.10 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում և երաշխավորում են, որ պայմանագրի 6.9-րդ ենթակետում նշված ծանուցման եղանակները համարվում են պատշաճ և վավեր: Ընդ որում ծանուցումը նշված կայքերում հրապարակվելու օրվանից Վարձակալը համարվում է պատշաճ ծանուցված պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին: Վարձակալն անվերապահորեն համաձայնվում է, որ պայմանագրի գործողության ողջ ընթացքում www.yerevan.am և www.azdarar.am կայքերին հետևելն իր անընդհատ և որևէ հանգամանքով չընդհատվող պայմանագրային պարտավորություն է:»

6) պայմանագրի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8. «Հողամասի տարեկան վարձավճարը համաձայն Երևան քաղաքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 36-րդ կետի 1-ին մասի գ) ենթակետի կազմում է ----- /թիվը՝ տառերով/ ՀՀ դրամ (քմ × 1քմ-ի կադաստրային արժեք ՀՀ դրամ × --%) × --(գործակից): Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը 1քմ համար կազմում է ------ ՀՀ դրամ:»

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի վարչական շրջանների ղեկավարների վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ՄԵՍՉՅԱՆ

Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հ.ՍԱՖԱՐՅԱՆ

Մ. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

_____(վարչական շրջանի ղեկավար)

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Հ.
Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

ք.Երևան «____»_____ 2020թ.

Երևան համայնքը, ի դեմս Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի, որի անունից Երևանի քաղաքապետի _____ որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար _____ը, այսուհետ «Կողմ-1», մի կողմից, և _____-ն, այսուհետև՝ «Կողմ-2», մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի _____թ. հ._____-Ա որոշումը՝

Երևանի քաղաքապետի ____ թվականի _____-ի հ._____-Ա որոշման հիման վրա, _____ թվականի _____ _____-ին կնքված հողամասի վարձակալության հ._____ պայմանագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) պայմանագրում «_____» բառերը փոխարինել «_____» բառերով:

2) պայմանագրի 16-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև ____ թվականի _____ __-ը.»

3) պայմանագրի 4.2 ենթակետից հանել «(այդ թվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու կապիտալ շինարարություն)՝» բառերը.

4) պայմանագրի 4.4 ենթակետից հանել «իսկ ամրակայված անշարժ գույքը կողմերի միջև որոշվող պայմաններով օտարելու վարձատուին» բառերը.

5) պայմանագրի 5.5 ենթակետից հանել «և ամրակայված անշարժ գույքը վարձատուին օտարելու» բառերը.

6) պայմանագրի 6-րդ կետը լրացնել նոր՝ 6.7, 6.8, 6.9 և 6.10 ենթակետերով, հետևյալ բովանդակությամբ.

«6.7 Վարձակալված հողամասի օգտագործման նպատակի փոփոխման անհրաժեշտության դեպքում վարձատուն իրավունք ունի, նախապես մեկ ամիս առաջ տեղեկացնելով վարձակալին, սահմանված կարգով հրաժարվել պայմանագրից:».

«6.8 Երևան համայնքի կամ Երևանի քաղաքապետարանի կողմից հավանության արժանացած քաղաքաշինական կամ ներդրումային ծրագրերի իրականացմամբ կամ քաղաքաշինական խնդիրների կանոնակարգմամբ, ինչպես նաև Երևան համայնքի կողմից կամ մասնակցությամբ այլ ծրագրերի իրականացման կամ հանրային նշանակության այլ խնդիրների կարգավորմամբ պայմանավորված՝ վարձատուն իրավունք ունի միակողմանի հրաժարվել սույն պայմանագրից, որի դեպքում պայմանագիրը համարվում է լուծված կամ դադարած՝ պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին ծանուցումը վարձակալի կողմից ստանալու պահից երեք ամիսը լրանալուն հաջորդող օրը, իսկ սույն պայմանագրից ծագող վարձակալության իրավունքի պետական գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վարձատուի դիմումի հիման վրա:»

«6.9 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում են, որ պայմանագրի 6.8-րդ ենթակետի համաձայն պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին Վարձատուի գրավոր ծանուցումը իրականացվում է հետևյալ երեք եղանակներով միաժամանակ.

ա. Վարձատուի գրավոր ծանուցումը հրապարակվում է Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների www.azdarar.am ինտերնետային կայքերում,

բ. Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է Վարձակալի էլեկտրոնային հասցեին (փոստին)՝առկայության դեպքում,

գ. Վարձատուի գրավոր ծանուցումն ուղարկվում է փոստային առաքմամբ՝ պատվիրված նամակով:

«6.10 Սույնով կողմերն անվերապահորեն համաձայնվում և երաշխավորում են, որ պայմանագրի 6.9-րդ ենթակետում նշված ծանուցման եղանակները համարվում են պատշաճ և վավեր: Ընդ որում ծանուցումը նշված կայքերում հրապարակվելու օրվանից Վարձակալը համարվում է պատշաճ ծանուցված պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին: Վարձակալն անվերապահորեն համաձայնվում է, որ պայմանագրի գործողության ողջ ընթացքում www.yerevan.am և www.azdarar.am կայքերին հետևելն իր անընդհատ և որևէ հանգամանքով չընդհատվող պայմանագրային պարտավորություն է:»

7) պայմանագրի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8. «Հողամասի տարեկան վարձավճարը համաձայն Երևան քաղաքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 25-ի ի.178-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 36-րդ կետի 1-ին մասի գ) ենթակետի կազմում է _____ /թիվը՝ տառերով/ ՀՀ դրամ (քմ × 1քմ-ի կադաստրային արժեք ՀՀ դրամ × __%) × __(գործակից): Պայմանագրի կնքման պահին հողամասի կադաստրային արժեքը 1քմ համար կազմում է ____ ՀՀ դրամ:»

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական կարգով վավերացումից հետո՝ ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման լիազորված մարմնում գրանցման պահից:

3. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ սույն համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը տրվում է «Կողմ-1»-ին, երկու օրինակ՝ «Կողմ-2»-ին, և մեկ օրինակ պահվում է նոտարական գրասենյակում:

5.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

«Կողմ-1»	**«Կողմ-2»**
_____	_____
(վարչական շրջանի ղեկավար)	**(անուն, ազգանուն կամ կազմակերպության անվանումը)**
_____	_____
(վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հասցեն)	**(հասցեն)**
_____	_____
(ստորագրություն)	**(բանկային վավերապայմանները)**
Կ.Տ	_____
	(ստորագրություն)

Ց Ա Ն Կ

Շենք- շինությունների զբաղեցրած հողամասերի համար կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու վերաբերյալ՝ Երևանի քաղաքապետի որոշման նախագծին կից ներկայացվող փաստաթղթերի

1. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող(ների) դիմումը կամ գրությունը
2. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող(ների) անձնագրի պատճենը, լիազորված անձի դեպքում՝ լիազորագրի բնօրինակը (իրավաբանական անձի դեպքում նաև իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը)
3. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճեն
4. Երևանի քաղաքապետի որոշման պատճեն(հողի վարձակալության պայմանագրի կնքման իրավական հիմքը)
5. Հողամասի գլխավոր հատակագծի պատճեն (դրա բացակայության դեպքում 1:500 և 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթ)
6. Հողամասի վարձակալության պայմանագրի պատճեն
7. Հողամասի վարձակալության վճարի գույքահարկի վերաբերյալ զրոյական տեղեկանք(նշված տեղեկանքի առկայությունն ապահովում է վարչական շրջանի ղեկավարը՝ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման միջոցով)
8. Հասցեի տրամադրման դիմաց գանձված վճարի անդորրագիրը՝ վճարված անշարժ գույքի սեփականատիրոջ անվամբ (անհրաժեշտության դեպքում)
9. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք՝ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ
10. Շինության լուսանկարներ՝ տարածքի լայնական ընդգրկմամբ

ՁԵՎ Հ.4

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Դիմող՝ _____
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____
(հասցեն, հեռախոսահամարը)

_____

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ երկարաձգել Երևանի քաղաքապետի _____ որոշման հիման վրա կնքված հողամասի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը:

Կից ներկայացնում եմ՝

11. Անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող(ների) անձնագրի պատճենը, լիազորված անձի դեպքում՝ լիազորագրի բնօրինակը (իրավաբանական անձի դեպքում նաև իրավաբանական անձի պետական ռեգիստրի գրանցման վկայականի պատճենը)
12. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքերի պետական գրանցման վկայականի պատճեն
13. Երևանի քաղաքապետի որոշման պատճեն(հողի վարձակալության պայմանագրի կնքման իրավական հիմքը)
14. Հողամասի գլխավոր հատակագծի պատճեն (դրա բացակայության դեպքում 1:500 և 1:2000 մասշտաբի տեղագրական հանույթ)
15. Հողամասի վարձակալության պայմանագրի պատճեն
16. Հողամասի վարձակալության վճարի գույքահարկի վերաբերյալ զրոյական տեղեկանք(նշված տեղեկանքի առկայությունն ապահովում է վարչական շրջանի ղեկավարը՝ աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման միջոցով)
17. Հասցեի տրամադրման դիմաց գանձված վճարի անդորրագիրը՝ վճարված անշարժ գույքի սեփականատիրոջ անվամբ (անհրաժեշտության դեպքում)
18. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք՝ գույքի կադաստրային արժեքի վերաբերյալ
19. Շինության լուսանկարներ՝ տարածքի լայնական ընդգրկմամբ

Դիմող՝ _____ _____
(ստորագրություն) (անուն և ազգանուն)

____ _____ 2020թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ – Ա

ԵՐԵՎԱՆԻ ..... ՓՈՂՈՑԻ Հ..... ՇԵՆՔԻ Հ.....՝ ..... ՔՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

.....-ը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևանի ..... փողոցի հ..... շենքի հ.....՝ .....քմ ընդհանուր մակերեսով բնակարանը մասնավորեցնելու խնդրանքով։

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու .....թվականի դեկտեմբերի .....-ի հ. .....-Ն որոշման դրույթները..

1.Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման .....թ. հ. ..... վկայական) Երևանի ..... փողոցի հ.....շենքի հ....՝ .....քմ ընդհանուր մակերեսով բնակարանը նվիրել նույն բնակարանի բնակիչներ՝ ..... (.... անձ, այսուհետ նվիրառու/ներ/)՝ որպես ընտանիքի բոլոր անդամների համատեղ սեփականություն։

2.Լիազորել Երևանի .....վարչական շրջանի ղեկավարին (.....)՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառու/ներ/ի հետ կնքել բնակարանի նվիրատվության մասին պայմանագիր:

3.Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից ։

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում ։

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի ..... վարչական շրջանի ղեկավարի վրա։

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը։

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ
Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

.....
(վարչական շրջանի ղեկավար)

Նախագծի հեղինակ՝ Երևանի .....
վարչական շրջանի ղեկավար

ՁԵՎ հ.6

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան ,,_____,,_____2020թ.

Երևան համայնքը ի դեմս քաղաքապետ Հայկ Մարությանի, որի անունից Երևանի քաղաքապետի ..... թվականի -ի հ. -Ա որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի ..... վարչական շրջանի ղեկավար .....ը, այսուհետ <<Նվիրատու>> մի կողմից, և քաղաքացիներ ..... բնակվողներ՝ Երևանի ..... փողոցի հ..... շենքի հ..... բնակարանում՝ մյուս կողմից, այսուհետ <<Նվիրառուներ>>, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու ..... թվականի դեկտեմբերի .....-ի <<Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման ..... թվականի ծրագրի վերաբերյալ>> հ.....-Ն որոշումը

ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1.Ես՝ .....ս Երևան համայնքի անունից նվիրեցի Երևանի ..... փողոցի հ.... շենքի հ.... բնակարանը, իսկ մենք՝ .....ս Երևանի համայնքից ընդունեցինք նվիրած Երևանի .....փողոցի հ..... շենքի հ..... բնակարանը:

2.Երևանի ..... փողոցի հ..... շենքի հ.....՝ .....քմ ընդհանուր մակերեսով բնակարանը պատկանում է նվիրատուին, համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման .....թ. հ..... վկայականի:

3.Նշված անշարժ գույքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում՝ համաձայն, ՀՀ կադաստրի կոմիտեի _____ տարածքային ստորաբաժանման կողմից ,,____,,_____2020թ. տրված հ._____ տեղեկանքի:

4.Սույն պայմանագիրը կազմված և ստորագրված է չորս օրինակից, որոնցից մեկը պահվում է ՀՀ նոտարական տարածքում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

5.Համաձայն քաղաքացիական օրենսգրքի հ.596 հոդվածի սույն պայմանագրից ծագող իրավունքը նոտարական վավերացման պահից՝ 30 օրյա ժամկետում ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

6.Նվիրառուներին են անցնում շենքի տակ գտնվող հողամասի և շենքի ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, ինչպես նաև հողամասի նկատմամբ այն իրավունքները, որոնք անհրաժեշտ են շենք-շինության օգտագործման և սպասարկման համար:

7.Նվիրառուները նվիրված անշարժ գույքը պարտավորվում են օգտագործել նպատակային նշանակությամբ:

8.

ՆՎԻՐԱՏՈՒ՝ .....
Երևան համայնքի անունից **(վարչական շրջանի ղեկավար)**

ՆՎԻՐԱՌՈՒՆԵՐ՝ .....
.....
.....

Ցանկ

Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանը կամ բնակելի տունը կամ բնակելի տարածքը Երևան քաղաքի ավագանու 25.12.2019թ. հ.178-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված անձանց սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու վերաբերյալ՝ Երևանի քաղաքապետի որոշման նախագծին կից ներկայացվող փաստաթղթերի

1. Երևան համայնքի անվամբ ձևակերպված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը.
2. Բնակարանի կամ բնակելի տան կամ բնակելի տարածքի վարձակալի կողմից Երևանի վարչական շրջանի ղեկավարին հասցեագրված դիմումը և նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնություն(եր): Համաձայնություն(երը) իր մեջ ներառում է տեղեկատվություն տվյալ գույքի սեփականաշնորհումը վարձակալի անվամբ, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անվամբ՝ որպես ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ձևակերպելուն.
3. ՀՀ կառավարության, պետական այլ մարմինների կամ Երևանի քաղաքապետի կամ Երևանի թաղային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների, կարգադրությունների կամ պետական մասնակցությամբ ընկերությունների (պետական ձեռնարկությունների կողմից տրամադրված օրդերները (այլ փաստաթղթերը) կամ սահմանված կարգով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռները.
4. Տեղեկանք ՀՀ ոստիկանության անձնագրային համապատասխան բաժնից՝ այդ հասցեում հաշվառված և հաշվառումից հանված անձանց վերաբերյալ՝ նշելով հաշվառումից հանելու հիմքը
5. Բնակտարածության օգտագործման իրավունք ունեցող անձանց անձնագրերի, ծննդյան վկայականների պատճենները:
6. Տեղեկանք բնակության վայրից (համատիրություն) տվյալ հասցեում բնակվող անձանց վերաբերյալ՝ նշելով որ թվականից են բնակվում:
7. Տվյալ հասցեի համար «Գազպրոմ Արմենիա» և /կամ/ «Վեոլիա Ջուր» և /կամ/ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների կողմից տեղեկանք՝ կատարված վճարումների ողջ ժամանակահատվածի վերաբերյալ:

Ձև հ.8

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

---------- ՀԵՏ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 20-- թվականի ------- ----ի հ.-------Ա որոշմամբ Երևան քաղաքի ---------- հասցեում ---------- սեփականության իրավունքով պատկանող ---------- մակերեսով հողամասին կից կառուցապատման իրավունքով տրամադրվել է ------ քմ մակերեսով հողամաս՝ տաղավարներ/-----/ կառուցելու նպատակով և 20---- թվականի ------- ----ին կնքվել է հ.------ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթարկվել է պետական գրանցման /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման ----------. հ.---------- վկայական/:

20--- թվականի ---------- ----ին կնքված կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հ.----- պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 20---- թվականի ---------- ----ին:

---------- դիմել է Երևանի քաղաքապետին՝ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի հ.178-Ն որոշման հավելվածի 36-րդ կետի 2-րդ ենթակետը և 20-- թվականի ---------- ---ին կնքված կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հ.--- պայմանագրի 9.2 կետը:

1.Լիազորել ---------- վարչական շրջանի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի քաղաքապետի անունից, ---------- հետ կնքել ---------- հասցեում գտնվող գույքի զբաղեցրած ------քմ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ գործողության ժամկետը մինչև 20---- թվականի դեկտեմբերի 31-ը՝ վարձավճարը սահմանելով հողամասի կադաստրային արժեքի 5%-ի չափով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա.ՄԵՍՉՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մ.ԱՂԱԲԵԿՅԱՆ

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Ց Ա Ն Կ

նախագծի անվանումը

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ « ---------- »/ /

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՔՈՒՄ ԱՌԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

</<	Փաստաթղթի անվանումը	էջերի քանակը
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		
19		
20		

Երևանի .....

վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի..... ..... բաժնի

……..մասնագետ..... .....

անուն, ազգանուն ստորագրության